ՄԱՐԶԻ ԼԻՃՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 624 որոշման պահանջները

որոշում եմ՝

1. Առաջարկել Լիճք համայնքի ղեկավարին /Գ.Գրիգորյան/՝

1) հատուկ ուշադրություն դարձնել տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծային պահանջների ձևկերպմանը: Ճարտարապետահատակագծային առաջադրանքները տալ միայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 29-ի N 1473-Ն որոշմամբ սահմանված կարգով.

2) սահմանված կարգով դադարեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404 որոշման պահանջների խախտումով Սևան-Մարտունի ավտոճանապարհի աջ կողմում Մայիս Մկրտչյանին թույլատրված շինարարության գործունեությունը և այն շարունակել սահմանված կարգով մարզպետի և ՀՀ քաղաքաշինության նախարարի հետ համաձայնեցնելուց հետո.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N91 որոշման 10-րդ կետի պահանջների համաձայն բոլոր շինարարության թույլտվությունների և ավարտական ակտերի կրկնօրինակները սահմանված ժամկետում ներկայացնել մարզպետին.

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դ.Հովհաննիսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ